

705

Գ. ԶԹԵՆՅ

ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԿՈՒ
ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ



Ս. ԷԶՄԱՆՈՒՆ
Երեւանի Գրական Մայր Սրահ
1914

63Գ

Գ-49

639

9-49

04 AUG 2010 *guy*


Գ. ՉԹԵՆՑ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ

ՄԵԾՈՒԻԻՆՆԵՐ



Պատերազմում վիրավորված
զինուորների և ցրանց ընտանիք-
ների օգտին:



Ս. ԷԶՄԻԱՇԻՆ

Ելեքարաշարժ Տպարան Մայր Աթոռոյ.

1914

1905
21599

5705

17 JUL 2013

1990



Ա.ԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Ս. Զաւարեան եւ Ալ. Քալանթար:

(Նրանց մահուան տարեդարձին)



1913 թուի հոկտեմբերի 14-ին և 20-ին իրար ետևից և միևնույն մահով կարճեցին իրենց երկրային կեանքը երկու ականաւոր հայ գիւղատնտեսներ, որոնց մենք ամենայն իրաւամբ հայոց ազգային մեծութիւններ կարող ենք անուանել: Ազգային մեծութիւններ չեն միայն վիպասանները, բանաստեղծները, գիտնականներն և պատերազմական հերոսները, որոնք հաստ հատորներ են թողել յաջորդ սերունդներին կամ արտասովոր խեղախութիւն են ցոյց տուել ռազմադաշտում: Ազգա-



21572+

յին մեծութիւններէն նոյնպէս և այն հասարակական գործողները, որոնք եղել են խաղաղ կուտուրական գործի ռանվիրաներ, որոնք կեդանի խօսքով և իրենց կենդանի օրինակով դաստիարակել են ժողովուրդը, մեծապէս նպաստել են նրա յառաջադիմութեան և զարգացման գործին, որոնք վառ են պահում ազգի լաւագոյն գաղափարներն ու ձգտումները, որոնք արթուն և անձնուէր պահապան են նախորդ սերունդներէ աշխատանքով սրբազործուած ժողովրդական նպատակներէ և գործ ունեն միայն ներկայով ու գալիք օրերի կադմակերպումով: Ազգային մեծութիւն է Ս. Զաւարեանը, ազգային մեծութիւն է և Ալ. Քալանթարը: Նրանք տաղանդաւոր կերպով կարողացել են ըմբռնել կեդտտ արտաքինի տակ պահուող՝ այս այն խրճիթում ցրուած ժողովուրդի վեհ հոգին, անգուգական ձգտումները: Որպէս լուսահանգոյց, նրանք իրենց մէջ են խտացրել հարազատ ժողովրդի զգացմունքներն ու ազգային ոգին: Այդ ոգին, մարմնացած անհատի մէջ, յստակօրէն զբաւորում է իւր բովանդակութիւնը, արտայայտվելով մեծ անհատի գոր-

ծունէութեամբ: Երբ Խրիմեան Հայրիկը «երկաթէ շերեփները» քարոզն էր կարգում և Գրիգոր Արծրունին ու Քրիստափոր Միքայէլեանը ազգի անհատականութիւնն էին պաշտպանում, կամ երբ Քալանթար և Զաւարեան գիւղական տնտեսութեան բարուորումն էին պահանջում և Ահարոնեանը զուլումի երգն էր տխուր հնչեցնում և վրէժ էր հայցում,—այս բոլոր զէպքերում մի Խրիմեան, մի Արծրունի, մի Քրիստափոր, մի Քալանթար, մի Զաւարեան և մի Ահարոնեան անհատական բարի ցանկութիւններով և հայեացքներով չէին առաջնորդվում. նրանք արտայայտիչն էին հայոց ազգային ոգու, նրանք լուսահանգոյցներն էին հայկական գիւղի խրճիթներէց եկող ճառագայթներէ, նրանք խօսնակներն էին հայոց ձգտումների և այդ պատճառով էլ նրանք մեր ազգային մեծութիւններն են:

*

Երկու գիւղատնտեսների մահուան առաջին տարեդարձին, գնահատութեան և նրանց անցեալ գործնէութեան արդիւնքների համաձուլման այս

Ժամին մենք աւելի պարզօրէն զգում ենք, թէ ինչպիսի հսկայական և հոյակապ են այդ մեծութիւններն իրենց գաղափարի բուռն ոգևորութեան թափով և հանրօգուտ գործունէութեամբ։ Բայց դեռ չէ եկել ժամանակը Ջաւարեանի և Քալանթարի բազմաբեղում, ստեղծագործող և վերանորոգչական կուլտուրական գործի ամբողջական ընդլայնումը տալու։ Նրանք, որ ապրել և գործել են մեր մէջ հանրային շինարար գործի վեհագոյն թելադրանքներով և պայքար են մղել մտավախութեան ու ստրկումսութեան դէմ, եղել են միշտ գործի մէջ և չեն թողել մեզ իրենց կեանքի և գործունէութեան նկարագիրը, մենք դատում ենք նրանց մասին մասնակի տեղեկութիւնների, անձկան տպաւորութիւնների և հասարակութեան սեփականութիւնը դարձան փաստերի հիման վրայ։ Նրանց գործունէութեան օբյեկտիվ, անաչառ և բազմակողմանի տեսութիւնը ուշ ժամանակի հարց է։ Յաջորդ սերունդները միայն կարող են այդ ունենալ, իսկ մենք այժմս պէտք է բաւականանանք այդ երկու մեծութիւնների գործնէութեան ընդհանուր գծերը և ընդ-

հանուր գաղափարները զուրս բերելով։

*

Ժողովրդի այն մեծ զանգուածը, որ իւր տնտեսութիւնը կապել է հողի հետ և արդար ու ազնիւ աշխատանքով հայթայթում է իւր ապրուստի միջոցները, եղել է այս երկուսի մըշտական մտածողութեան և հոգացողութեան առարկան։ Քալանթարը և Ջաւարեանը աշխատել են ուսումնասիրել գիւղը, բազմատեսակ միջոցներ են գործ դրել պարզելու նրա կարիքները և պահանջները, նրանք ծրագրել են բարուոքումների մի շարք ուրրուազներ՝ բարձրացնելու ժողովրդական մասսայի տնտեսական մտաւոր վիճակը, նրանք երկուսն էլ անմիջական շփման մէջ են եղել գիւղացիութեան հետ և գերազանցօրէն ճանաչել են մեր երկրի իւրաքանչիւր խորշը։

Միատեսակ գիւղատնտեսական բարձր զարգացմամբ օժտուած, նրանք միապէս հմուտ էին իրենց մասնագիտութեան մէջ, Մօսկուայի Պետրոսեան գիւղատնտեսական ճեմարանում նրանք մարզուել են ժողովրդական և գիւղական տնտե-

սութեան ինդիւնների լուծմամբ, ազդուել են տասն և իններորդ դարի եօթանասնական և ութսունական թուականների ուսուցիչական մտաւորականների «դեպի գիւղ» կոչեց, և վառ սէր ունենալով դէպի Հայրենիքը—նրանք ուսուցիչականների պէս ուխտեցին հայ գիւղէն ծառայել, նրա տնտեսութեան բարգաւաճման նուիրել իրենց ամբողջ կեանքը, որովհետեւ բարգաւաճ տնտեսութիւնն է մի ժողովրդի հաւաքական զարգացման և յառաջագիւտութեան անփոփոխ պայմանը. այս ճշմարտութիւնն էլ Քալանթարն և Զաւարեանն են առաջին անգամ ամուր պատճառաբանութեամբ արծարծել մեր ժողովրդի մէջ:

Քալանթարը, որ աւելի տարիքով էր Զաւարեանից և աւելի վաղ էր մտել հասարակական գործունէութեան ասպարէզը, դարձաւ մի անձնուէր հայ *народникъ*, թողեց մեջին Ռուսաստանի նահանգներում հրապուրիչ պաշտօնները և իրեն նուիրեց իւր հայրենի երկրին, Կովկասին, այստեղ նա գործեց, այս երկրի մանրագնին ուսումնասիրութիւնը և գիւղական տնտե-

սութեան բարձրացման ինդիւնները դարձրեց իւր կեանքի գործունէութեան նպատակ: Այլ Քալանթարը մարմնացումն էր անդու աշխատանքի և աղնիւ ու անկեղծ ժողովրդասիրութեան: Նա իւր ձեռներեցութեան, գործելու և աշխատելու անսպառ եռանդով հիացմամբ և զարմամբ էր պատճառում իւր շրջապատողներին. Գիւղական շրջաններում իւր կատարած գործով և շինականներին օգնելու իւր մեծ պատրաստականութեամբ, պարզ, հակիրճ և համոզիչ խօսքերով և միշտ առոյգ տեսքով ու աշխոյժ բնաւորութեամբ մեծ համբաւ և խորին համակրանք ու յարգ էր վայելում: Զաւարեանը այնքան մեծ հեղինակութիւն չունեւ Ռուսահայ գիւղական շրջաններում. նրա գործունէութեան այդ ասպարէզում համեմատաբար աւելի կարճատեւ է եղել, նա Կովկասից իւր գործունէութիւնը տեղափոխեց Տաճկահայաստան, մինչդեռ Քալանթարը ամբողջ 38 տարի եղել է Կովկասահայ գիւղացու մօտ, նրա խորհրդատուն: Վերջին տարիներում Քալանթարը յաճախ ասում էր, որ հայ մտաւորականութեան վրայ ընկնում է կուլտուրական առաքելութեան

պարտականութիւն. նա ինքը առաջինը իրազոր-
ծում էր իւր ասածը. արթնացնել ժողովուրդը
դէպի կուլտուրական գործունէութիւն, աջակցել
հասարակութեան մաքառելու իրականութեան
խոչնդոտների դէմ և մշակել նրա համար փրկա-
րար գործունէութիւնների ուրուագծեր — ահա
այն հոյակապ առաքելութիւնը, որին նուիրուեց
Քալանթար: Իւր բազմապիսի զբաղմունքների ա-
մենօրեայ գործնէութեան ծփանքների մէջ նա
երբէք աչքաթող չէ արել էականը և գաղափա-
րը, չնայած բազմատեսակ խոչնդոտների և ա-
նախորժութիւնների: Թէ որպէս հրապարակագիր
«Մշակի» մէջ, որի խմբագիրն էր ամբողջ 20
տարի Գր. Արծրունուց յետոյ, թէ որպէս դա-
սախօս իւր ճառերով կամ թէ որպէս անգամ
այլ և այլ ընկերութիւնների, թէ որպէս Երկրա-
գործութեան Դեպարտամենտի մարձը պաշտօ-
նեա՝ աւագ մասնագէտ անասնապահութեան ու
կաթնատնտեսութեան և վերահսկիչ ամբողջ Կով-
կասի արօտատեղերի — այս բոլոր դէպքում Քա-
լանթարը ամենից առաջ իւր ուշադրութիւնը
դարձնում էր հայ գիւղի և նրա պահանջների

վրայ: Նա հայ գիւղի երգուեալ պաշտպանն ու
բարեկամներն էր: Գողթանի այս դաւակը հա-
ւասարապէս սիրում էր և Շիրակի, Ղարաբաղի,
Վանանդի, Սուրմանլուի, Աբարանի և Զանգե-
զուրի հայ գիւղերը, ուր յաճախակի այցելու-
թեան էր գնում. այդ այցելութիւնները սոսկ
հետաքրքրութեան յագուրթ տալու համար չէր
անում Քալանթարը. նա գիւղ էր գնում — հետը
տանելով նոր խօսք, նոր պատգամ, նոր գործիք
և նոր փորձեր. նա գիւղում իրեն թարմացած
էր զգում. Քալանթարի ամեն մի շարժման, ամէն
մի խօսքի մէջ ջերմութեան, գուրգուրանք և
անկեղծութիւն էր ցօլում, նա մեր երկրի եր-
գիչն էր, կենդանի աշխարհագրութիւնը և ուղ-
ղեցոյցը, որ ամենայն ճշտութեամբ պատմում
է ամեն մի սարի, կերճի, ձորի և դաշտի պատ-
մութիւնը, նրանց տէրերի և բնակողների դը-
րութիւնը: Այլ. Քալանթարը եզակի կովկասագէտ
էր. նա իւր շուրջը ժողովեց երիտասարդների և
աշակերտների մի մեծ բանակ, որոնց և նա ու-
ղարկում էր մեր երկրի հեռաւոր անկիւնները —
կամ միասին էին գնում և այնտեղ գիւղացիներ-

քի աչքի առաջ փորձում էին նոր-կատարելագործուած գործիքները, գութանների փորձ, սեր-գատ մեքենայի և խնոցիների փորձ, անայնա-գործական են շուկակային ուստայները աշխա-տանքի փորձ և այլ փորձեր, որոնց ղեկավարը և յաճախ սև աշխատանքներ կատարողը Քալան-թարն էր լինում. նա չէր խորշում ոչ մի տե-սակ աշխատանքից, այս Քալանթարի բնութագրի բնորոշ գծերից մէկն է. նրա ջանքերով կազմա-կերպուեց Թիֆլիսի Հայոց Տնայնագործական Ընկերութիւնը, ւր յետոյ կոչուեց Կովկասի Հա-յոց Գիւղ. և Տնայն. Ընկերութիւն, որի անփոփոխ նախագահն էր Քալանթարը մինչև անցեալ տար-ուայ հոկտեմբերի 20-ը, երբ Ռաֆֆու գերեզ-մանի վրայ խօսքը բերանին գետին զլորուեց դարաւոր կաղնու պէս:

Քալանթարն էր, որ մեր երկրում սկիզբ դրեց գիւղատնտեսական ամարային դասընթացը-նեին, որոնց ընդհանուր ղեկավարը լինելուց բացի, նաև դասախօսն էր ու գործնական աշխա-տանքներ կատարողը. այսպիսի դասընթացներ նա կազմակերպում էր Համալի, Մեծ-Ղարաքի-

լիսա գիւղերում, Ալեքսանդրօպօլում, երբեմնա-կի զրոյցներ և փորձեր էր կատարում Նոր-Բա-յագէտի գիւղերում, Ախալքալակի շրջանում, Կարսի հայ և ռուս գիւղերում, ինստրուկտօրներ էր ուղարկում գիւղատնտեսութեան զանազան մասնագիտութիւնների, անասունների շրջանա-յին ցուցահանդէսներ էր կազմակերպում, ինչ-պիսին նա արեց Կարսում, Ալեքսանդրօպօլում և Վօրօնցովկայ գիւղում:

Հանգիստ ժամանակ և երկար աշխատանք է պահանջվում Քալանթարի գիւղատնտեսութեան լրիւ և ճիշտ պատմութիւնը տալու. դեռ չէ հա-սել օրը այդպիսի աշխատանքի համար: Չէ հա-սել օրը և կարգաւորելու Ձաւարեան կեանքի և գործունէութեան փաստերը: Այն փշոտ և տա-տասկոտ ճանապարհը, որ տանում էր դէպի լու-սաւոր գաղափարի տիրապետութիւնը և դէպի վարդազոյն հորիզոններ, երբէք չէր յուսահատեց-րել Ձաւարեանին, չնայած անվերջ զրկանքների, հալածանքների և զոհերի: Ձաւարեանը մի գա-ղափարալաշտ էր, որի համար զարտուղիներ և կօմպրօմիսներ գոյութիւն չունէին. նա հաւա-

տացած և ուխտուած իդեալիստ էր և այդպէս էլ գերեզման իջաւ: Նրա կեանքը ամենօրեայ ողջակիզում էր սեփական անձի, նա Չերնեշևսկու հերոս Ռախմետովն էր, աւելի ցայտուն գծերով և խոշոր անհատականութեամբ:

Սիմէօն Չաւարեանին գոհացում չտուեց խաղաղ կուլտուրական գործը, որին նուիրուած էր սկզբում իբրև Կովկասեան Կայսր. Գիւղ. Ընկ. գործունեայ անդամ, նրան գոհացում չտուեց գիւղական տնտեսութեան խաղաղ և աստիճանական բարեկարգման ծրագիրը: Այդ ծրագրին էր նա նուիրուած, այդ նպատակով շրջագայել էր Երևանի և Կարսի նահանգները և իւր մանրակրկիտ հետազոտութիւնները գրի առել, նոյնպէս և Ղարաբաղի տնտեսական վիճակը 1906/7 թուականներին սովի ժամանակ, հրատարակել է «Ծրագիր գիւղացի ազգաբնակչութեան տնտեսութեան ուսումնասիրութեան»: Բայց բախտը նրան չէր ժպտում, նա ստիպուած եղաւ տարագիր լինել և անցաւ Թիւրքահայաստան, ուր ձեռնամուխ էր եղել նոյն կուլտուրական գործին, տնտեսութեան բարելաւմանը: Այստեղ նա մեծ հեղինակութիւն

ձեռք բերեց իբրև թեմական տեսուչ և գիւղացիութեան ցաւերին նուիրուած գործիչ:

Քալանթարը և Չաւարեանը գործել են միասին, երբ Չաւարեան դեռ Կովկասումն էր. երկուսն էլ տոգորուած էին հանրային շինարար աշխատանքի ցանկութեամբ, երկուսն էլ շիտակ և անկեղծ ժողովրդասէրներ էին, երկուսն էլ միևնոյն հաւատն ունէին հայկական գիւղի վերածնութեան, երկուսն էլ զբաղվում էին հայերիս դարաւոր իդէալի, ազգային ինքնորոշման հարցերով: Բայց նրանք տարբեր ուղիներով էին ընթանում, մէկը լեզալ ճանապարհով տնտեսութեան և ազգի ընդհանուր մտաւոր մակարդակը աստիճանաբար բարձրացնելուն էր կողմնակից, իսկ միւսը ցանկանում էր արագացնել այդ բարձրացումը մի շարք միջոցներով...

Քալանթարը և լրագրական գործիչ էր, իսկ Չաւարեանը չէր սիրում լրագրական յօդուածներ գրել. նա զիմում էր այդ միջոցին այն ժամանակ, երբ գործի անմիջական շահերն էին պահանջում: Չաւարեան կողմնակից էր այն բանի, որ մեր ազգային հիմնարկութիւնները ունենալու

են դրամ վերցնելու և պատժելու ֆունկցիաները, այլապէս, «հանդէսները, ճառերը, ծրագրները և դրանց նման դատարկ խօսքեր սկսած են ընդունուել բուն գործի, սանդղագործող աշխատանքի տեղ»։ Ռէալ ուժի և իրական շօշափելի գործի փափագն ունէր Զաւարեան։

Ահա այն ընդհանուր գաղափարները, որ ունէին հայերիս ազգային այս երկու մեծութիւնները։ Երբ կացնի անցողական այս շրջանը և պատերազմակն խուճապին կը փոխարինէ հանգիստ կուլտուրական աշխատանքը—այն ժամանակ աւելի շատ բան կարելի է ասել այս երկու ազնիւ ժողովրդասէրների մասին. նրանց յիշելը և նրանց քարոզների կրկնութիւնը կը նպաստէ նոր Քալանթարների և Զաւարեանների առաջ գալուն։

Ս. Եջմիածնի



ՀՀ Ազգային գրադարան



NL0276956

14940

